# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/172 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **01.12.2021թ.**

24.11.2021-01.12.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ օդաճնշակի ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/172 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Բադալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Զ. Դիլանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի Կոմպլեքսային վերանորոգման արտադրամասի ավագ վարպետ 1-ին խմբի, |
| Ռ. Կոգանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ավագ ապրանքագետ-պահեստապետ, |
| Վ. Երանոսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետի տեղակալ վերանորոգման գծով: |

Հանձնաժողովի նախագահ Վ. Մելյանը («էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետ) բացակայում էր: Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Բադալյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի նոյեմբերի 24-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Օդաճնշակ ВГ 042/8 - 400 /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 16800000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ | 6166123520 | УЛ. ГЕОЛОГИЧЕСКАЯ, Д. 2, КВ./ОФ. 407, РОСТОВСКАЯ ОБЛАСТЬ, Г. РОСТОВ-НА-ДОНУ | +7 960 445 48 44 | tnlider@mail.ru |
| 2 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 00179816 | ՀՀ, ք.Երևան, Սայաթ-Նովայի պող., 19 շենք | +37444404121 | reforcegroupllc@gmail.com |

| | ՍՊԸ | | Շահումյան 5 փ. 19 տուն | | ail.com |
|---|---|---|---|---|---|

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակցի.

1. «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով՝ հավաստելով, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 1.3-ի: Հավելված 1.1-ով ներկայացված գնման առարկայի չափաբաժնի համարը նշված է 2, մինչդեռ պետք է լինի 1: Հավելված 1.3-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի 4.7 (Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները) բաժնով պահանջվող տեղեկատվությունը ներկայացված չէ, ինչպես նաև միաժամանակ լրացրել են և 4.5 (Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների) բաժինը և 4.6 (Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար) բաժինը, մինչդեռ պետք է լրացվեր կամ 4.5 բաժինը կամ 4.6 բաժինը:

2. «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ - սույն գնման ընթացակարգին հայտով Հավելված 1.1-ով ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրում բացակայում է սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված հետևյալ տեղեկատվությունը՝ «Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, անհրաժեշտության դեպքում՝ գործարանային փաթեթավորմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը: Ըստ Պատվիրատուի պահանջի վաճառողը գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ»:

3. «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ - սույն գնման ընթացակարգին հայտով Հավելված 1.1-ով չեն ներկայացվել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Օդաճնշակ ВГ 042/8 - 400 /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ | 16,800,000.00 | 19,800,000.00 | 0.00 | 19,800,000.00 |
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 16,800,000.00 | 20,750,000.00 | 4,150,000.00 | 24,900,000.00 |
| | | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | 16,800,000.00 | 18,300,000.00 | 3,660,000.00 | 21,960,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. 24.11.2021թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել անհամապատասխանություններ արձանագրած մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Բոլոր մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | բավարար |

4. Հանձնաժողովի նիստը 26.11.2021թ. կասեցնել՝ բավարար գնահատված մասնակիցների հետ գնման հայտով սահմանված նախահաշվային գները գերազանցող չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2021թ. նոյեմբերի 30-ին ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 8-րդ հարկում:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էին «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ-ն և «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

2. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
| 1 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 14,000,000.00 | 2,800,000.00 | 16,800,000.00 |
| 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | 16,400,000.00 | 3,280,000.00 | 19,680,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափա | Մասնակցի | | Ընտրված | Մասնակցի |
|---|---|---|---|---|

| | | | նշվում է "X" | |
|---|---|---|---|---|
| 1 | 3 | «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ | | 19,800,000.00 |
| | 1 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | X | 14,000,000.00 |
| | 2 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | | 16,400,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվանից 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Բադալյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ջ. Դիլանյան

Ռ. Կոգանյան

Վ. Երանոսյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մ. Ղազարյան